ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու

ԱՄԲԵՐԴ (ՖՌԱՆԿԱՆՈՑ) ԳՅՈՒՂԸ, Ս. ԹՈՎՄԱ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՆՈՐԱՀԱՅՏ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամբերդ (Ֆռանկանոց, Ֆռանգանոց) գյուղը գտնվում է ՀՀ Արմավիրի մարզում՝ Վաղարշապատից մոտ 8 կմ հյուսիս-արեւմուտք: Այն նախկինում մտել է Երեւանի նահանգի Էջմիածնի գավառի մեջ: Ամբերդ անունը, որ գյուղն ստացել է 1978 թվականից, առաջացել է համանուն գետակի անունից, որը Քասաղի աջ վտակն է: Այն սկիզբ է առնում Արագածի աղբյուրներից եւ Ամբերդ գյուղի մոտ թափվում Քասաղ գետը[1]: Գյուղի նախկին՝ Ֆռանկանոց անունը, ըստ էության, խոսում է ժամանակին տեղում կաթոլիկների (ֆռանկների) համայնքի գոյության մասին[2]: Սակայն, նախկին անվան իմաստը տեղացիներն այլ կերպ են ստուգաբանում. գյուղի բնակիչներից Մեսրոպ Մնացականյանի (ծնվ. 1965 թ.) համոզմամբ՝ Ֆռանկանոց անունը կապված է Ամբերդ եւ Քասաղ գետերի միացման հատվածում երբեմնի գոյություն ունեցած փռերի հետ, որտեղից հաց է մատակարարվել Էջմիածին, Արմավիր եւ Օշական համայնքներին: Չի բացառվում, որ հենց փռանոց - փռնանոց - ֆռանոց - ֆռանկանոց բառի՝ ժամանակի ընթացքում կրած հնչյունափոխությունների ու բառաբարդման արդյունքում էլ առաջացած լինի հիշյալ տեղանունը: Ինչ վերաբերում է գյուղի՝ ֆռանկների (կաթոլիկների) համայնքի անունով կոչվելուն, ապա ըստ Մ. Մնացականյանի՝ գյուղում ֆռանկներ երբեք չեն եղել: Միայն 1910-1915 թթ. հետո գյուղ են ժամանել կրոնավոր-քարոզիչներ (միսիոներներ), որոնք տեղում մի ժողովարան են հիմնել, որը կիսավեր վիճակում այսօր էլ կանգուն է եւ գտնվում է Գրավիչ Գաբրիելյանի տան բակում:

1 Տե՛ս **Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան,** Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երեւան, 1986, էջ 213: Տե՛ս նաեւ «Հայկական սովետական հանրագիտարան» (այսուհետ՝ ՀՍՀ), հ. 12, Երեւան, 1986, էջ 697:

2 **Սիմեոն կաթողիկոս Երեւանցի,** Ջամբռ, Երեւան, 2003, էջ 460, ծանոթ. 61:

Գյուղն ունի ավելի քան 2000 բնակիչ (շուրջ 400 տնտեսություն), որոնց հիմնական զբաղմունքը հողագործությունն է: Ամբերդում վերջին տարիներին (2004-2014 թթ.) ռուսաստանաբնակ գործարար Նշան Ստեփանյանի եւ նրա նախաձեռնած «Ֆռանկանոց» հիմնադրամի միջոցներով պարբերաբար իրականացվել են բարենորոգչական աշխատանքներ, մասնավորապես՝ բարեկարգվել են գյուղամիջյան եկեղեցիներն ու դրանց շրջակայքը, խաղահրապարակը, մարզադպրոցը, կառուցվել է աղբյուր-հուշարձան եւ այլն:

Նախորդ դարի 30-ական թթ. գյուղի հյուսիսային մասում հայտնաբերվել են էնեոլիթյան բնակատեղի եւ դամբրանադաշտ[3]: Նշենք, որ Հայկական լեռնաշխարհի էնեոլիթյան հուշարձաններն առավելապես ուսումնասիրված են Արարատյան դաշտավայրի մի շարք շրջաններում: Նման հուշարձաններ հայտնաբերվել են Շրեշ բլուրում (1913 թ., 1928 թ.), Մոխրաբլուրում, Խզնավուզում, Ֆռանկանոցում (1936-1938 թթ.) եւ Շենգավիթում (1958-1966 թթ.): Ըստ հնագետ Ս. Սարդարյանի՝ «Ֆրանգանոցի էնեոլիթյան բնակատեղին ունի քարե հիմքով, աղյուսե պատերով 6 - 8 մ տրամագծով կլոր կացարաններ եւ նրանց կից քառանկյուն շենքեր»[4]: Պեղումների ընթացքում գտնվել են քարե աղորիքներ, տրորիչներ, վարսանդներ, օբսիդիանից գործիքներ, ինչպես նաեւ սեւ փայլեցված եւ կարմիր մակերեսով, գորշ ու կարմիր աստառով, երկրաչափական նախշերով խեցու բեկոր՝ վրան կանթ[5]: Հայաստանի հնագույն հողագործության ու անասնապահության զարգացման ուղիները, ըստ Ս. Սարդարյանի, լավագույնս դրսեւորված են մ.թ.ա. III հազարամյակի խոշոր բնակավայրերում, որոնց շարքում նաեւ Ֆռանկանոցի բնակատեղին է: Նման հուշարձանները հնագետը կոչում է հնաքաղաքներ. «...որոնցից յուրաքանչյուրը ընդգրկում է ավելի քան 6 հեկտար տարածություն. սրանք տարբերվում են Իրանի եւ Միջագետքի նույնատիպ հուշարձաններից»[6]:

Ֆռանկանոցի տարածքից հայտնաբերվել են վաղբրոնզեդարյան ժամանակաշրջանին բնորոշ հնագիտական նյութեր: Առավել նշանավորն այստեղից գտնված թաղարն է, որն աչքի է ընկնում ինքնատիպ զարդանախշերով եւ շեշտված եռամասնությամբ՝ վիզ, փոր եւ ներքնամաս[7]:

---

3 Արագածի եւ նրա շրջակայքի բրոնզ-երկաթեդարյան հնագիտությանը վերաբերող անգլերեն աշխատության մեջ հնագետներ Ռ. Բադալյանը եւ Պ. Ավետիսյանն անդրադառնում են նաեւ Ֆռանկանոցում՝ տարբեր տարիներին իրականացված հնագիտական-հետախուզական աշխատանքներին, ինչպես նաեւ գտածոներին. վերջիններս թվագրվում են վաղ եւ ուշ բրոնզե դարով: **R. S. Badalyan, P. S. Avetisyan,** Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia. I, Mt. Aragats and its Surrounding Region, BAR International Series 1697, 2007, p. 86-89, pl. I-III.

4 Տե՛ս **Ս. Հ. Սարդարյան,** Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երեւան, 1967, էջ 199:

5 Անդ:

6 Անդ, էջ 230:

7 Տե՛ս Է. **Վ. Խանզադյան,** Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, Երեւան, 1967, էջ 62, նկ. 11:

Թաղարի զարդարվեստը, ըստ հնագետ Ե. Բայբուրդյանի, հարազատ է «շենգավիթյան» վաղբրոնզեդարյան խեցեղենի զարդամոտիվներին, որը «...имеет орнамент в виде ряда круглых плоских или вогнутых вдавлений по корпусу, таких вдавлений бывает от 4-х до 2-х»[8].

1978-1980 թթ. Ֆռանկանոցում հնագիտական-հետախուզական աշխատանքներ է իրականացրել նաեւ հնագետ Ռ. Թորոսյանը. գտնված նյութերը պահվում են Էջմիածնի պատմաազգագրական թանգարանում: 1980-ականների վերջերին տարածքում ուսումնասիրություններ է կատարել նաեւ հնագետ Գ. Արեշյանը[9], իսկ 2000 թ. այստեղ հնագիտական պեղումներ է իրականացրել հնագետ Պ. Ավետիսյանը. գտածոները պահվում են ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտում:

Բնակավայրը միջնադարյան սկզբնաղբյուրներում մինչեւ ԺԷ. դարը չի հիշատակված: Ֆռանկանոցի մասին առաջին հիշատակություններից մեկը հաղորդում է Զաքարիա Սարկավագը. նրա «Պատմագրության» երկրորդ հատորի ԻԵ. (25) գլխում նկարագրվում է պարսիկ հարկահան Ղարա-Ղուբաթի անբարո վարքը, որը «...բազում կաշառօք էառ զքալանթարութիւն երկրին Երեւանայ, որ ասի Պարսկերէն Շահրիարի»[10]: Չնայած Փիլիպոս Ա. Աղբակեցի (1633-1655) Կաթողիկոսի հանդիմանություններին՝ նա իր նենգությամբ շարունակում էր նեղություն պատճառել հատկապես գյուղացիներին: Բացառություն չէին նաեւ Ֆռանկանոցի բնակիչները. «Եւ էր նորա ծառայ մի՝ որ ասէին Ղաս-Ահմատ. Սա առաքեցաւ ի Քալանթարէն (ի) գործ ինչ ի գիւղն Ֆռանկանոց եւ նեղեր զգիւղականսն եւ նոքա եկին առ Կաթուղիկոսն եւ գանգատեցին ի Մահմատէն»[11]: Ի վերջո, Ղարա-Ղուբաթն ստանում է իր արժանի պատիժը, հալածվում Փիլիպոս Կաթողիկոսից ու հեռանում քալանթարության պաշտոնից:

Զաքարիա պատմագրի հիշյալ վկայությանն անդրադարձել է Ղ. Ալիշանը, հետագայում նաեւ՝ Լեոն[12]: Ֆռանկանոց գյուղն Ալիշանը «տեղադրում» է Մեծամոր եւ Քասաղ գետերի միջնամասում. «Ի գետամէջս Մեծամօրի եւ Քասաղայ են գեօղք, Ֆռանկանոց, իբր մղոնաւ յելից Արամլուի, եւ երկուք՝ ի Հր. Օշականայ, Ս. Թովմաս կամ Ս. Ստեփանոս եկեղեցեաւ: ...Կալուած էր Էջմիածնի երբեմն գիւղս այս, ի Յակոբայ Ջուղայեցւոյ եւ յԱբրահամայ ստացեալ. այլ Սիմէոն Կաթողիկոս, որ երբեմն զկէսն գնեալ էր ի Հիւսէին Ալի խանէ, տեսեալ զագահութիւն նորա՝ եթող նմա եւ փոխանակ այնր

8 **Е. Байбуртян,** Последовательность древнейших культур Армении на основании археологического материала, Ереван, 2011, էջ 51, նկ. 12б:

9 Ֆռանկանոցի հնագիտական ուսումնասիրությունների վերաբերյալ մեզ տեղեկություններ հաղորդեց հնագետ Ա. Գնունին, ինչի համար շնորհակալություն ենք հայտնում:

10 «Զաքարեայ Սարկաւագի պատմագրութիւն», Վաղարշապատ, 1870, էջ 39:

11 Անդ, էջ 40:

12 Տե՛ս **Լեո**ն, Երկերի ժողովածու, հ. երրորդ, գիրք առաջին, Երեւան, 1969, էջ 296-297:

գնեաց ի նմանէ զբովանդակ Քիլթեփէ գիւղ ի հարաւակողմն Էջմիածնի, առ ամանուն բլրով»[13]: Պարզվում է, որ դեռեւս Հակոբ Դ. Ջուղայեցու (1655-1680) ժամանակներից Ֆռանկանոցը պատկանել է Մայր Աթոռին, որի մասին պահպանվել են նաեւ այլ վկայություններ:

Աբրահամ Կրետացու «Պատմության» քսաներեքերորդ գլխի «Եւ՝ վասն Է. (7) մուլք գիւղորէիցս» խորագրով հատվածում նշվում է. «Նաեւ Է. (7) գիւղորայսն, որք են այսոքիկ՝ Էջմիածնայ գեղն, Մաստարայ, Ֆռանկանոց, Յուշական, Քիրաշլուն, Տիպաքլուն, Չէլէպի Ղշլաղն, զոր երբեմն ունէր մուլք սուրբ աթոռս, այժմ նոր նորոգեցաւ: Եւ կրկին ռախամ առի եւ մեծազօր Խանէն եւ հաստատեցի մուլքն ի վերա սուրբ աթոռոյս ըստ առաջի սահմանին»[14]: Այսինքն՝ հիշատակված յոթ գյուղերը նախկինում Մայր Աթոռի մուլքի[15] կամ կալվածքի մասն են կազմել, որը վերահաստատել է Աբրահամ Գ. Կրետացի (1734-1737) Կաթողիկոսը:

Էջմիածնապատկան վերոհիշյալ յոթ մլքատու գյուղերը քանիցս հիշատակում է նաեւ Սիմեոն Ա. Երեւանցի (1763-1780) Կաթողիկոսը: Նադիր շահի իշխանության եւ Աբրահամ Գ. Կրետացու կաթողիկոսության օրոք «... Էջմիածնի գյուղի, Օշական, Ֆռանկանոց, Մաստարա, Քիրաշլու, Դիպակլու եւ Քեշիշքյանդ գյուղերի վեց դանկ մուլքը ստույգ (պատկանում է) Էջմիածնին, որոնց նկատմամբ ոչ ոք իրավունք չունի ձեռք մեկնել...»[16]: Ըստ Սիմեոն Կաթողիկոսի հաղորդման՝ դեռեւս Շահ Սեֆիի եւ Մովսես Գ. Տաթեւացի (1629-1632) Կաթողիկոսի ժամանակներից Ֆռանկանոցի վեց դանկ[17] մուլքին տեր էր դարձել Ահլուլա անունով մի տաճիկ. այն հետագայում վաճառում են Հակոբ Ջուղայեցի Կաթողիկոսին՝ ինը թուման ինը հազար դիւան եւ տասը շահիով[18]:

Հարկահանության խստացման պատճառով գյուղը դժվարին կացության մեջ էր հայտնվել նաեւ Աբրահամ Բ. Մշեցի (1730-1734) Կաթողիկոսի օրոք: Դիմելով վերջինիս՝ գյուղացիները խնդրում են. «...վեց հարյուր ղուռուշ օսմանցոց դրամ, որը մեր երկրի հաշվով անում է քառասուն թուման, այն պայմանով, որ մեկ տասներորդ մուլքից բացի, որ պարտավորվում են տալ

13 Տե՛ս **Ղ. Ալիշան**, Այրարատ. բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 202-203:

14 **Աբրահամ Կրետացի,** Պատմություն, քննական բնագիր, ռուսերեն թարգմանություն եւ ծանոթագրություններ՝ Ն. Կ. Ղորղանյանի, Երեւան, 1973, էջ 73:

15 Մուլք (միլք) եզրույթը ծագում է արաբերեն mülk կամ թուրքերեն milk բառերից եւ նշանակում է անշարժ կալվածք, հող, շինություն: Տե՛ս Հայերէն բացատրական բառարան, կազմեց **Ստ. Մալխասեանց,** հ. երրորդ, Երեւան, 1944, էջ 341: Իբրեւ հարկատեսակ նույնանում է տասանորդի հետ, որ ստորեւ հիշատակում է Մ. Օրմանյանը:

16 **Սիմեոն կաթողիկոս Երեւանցի,** Ջամբռ, էջ 163:

17 Դանգ (դանկ) եզրույթը ծագում է պահլավերեն dāng բառից եւ նշանակում է հատիկ, դրամի մեկ վեցերորդ մասն, պարսկ. դրամի քառորդ մասն, իսկ իբրեւ ծանրության կշիռ հավասար է 2 գարեհատի: Տե՛ս Հայերէն բացատրական բառարան, կազմեց Ստ. Մալխասեանց, հ. առաջին, Երեւան, 1944, էջ 485:

18 Տե՛ս **Սիմեոն կաթողիկոս Երեւանցի,** Ջամբռ, էջ 157-158:

Սուրբ Աթոռին, եւ սմեկ մուլք կտան, որ լինի մեկ հինգերորդը՝ ամբողջը միասին: Եւ Աբրահամ Կաթողիկոսը նույնպես նրանց տալիս է վեց հարյուր դուռուշ դրամ եւ առնում է նրանցից մի կալվածագիր...»[19]: Այնուհետեւ, Ֆռանկանոց գյուղը, «երբ վերացավ Պարսից թագավորությունը եւ խռովության մեջ ընկավ Երեւանը, ամբողջովին ամայացավ բնակիչներից, ինչպես որ մյուս շատերը»[20]: Ըստ Սիմեոն Երեւանցու՝ Հակոբ Ե. Շամախեցի (1759-1763) Կաթողիկոսի օրոք «...Երեւանի Հուսեին Ալի խանը պայմանավորվում է Հակոբ Կաթողիկոսի հետ, թե ինքն այստեղից-այնտեղից հայեր կբերի եւ կբնակեցնի այս (գյուղում) եւ կշենացնի, (եւ) մուլքի կեսը ինքը կվերցնի, մյուս կեսը՝ նա (Կաթողիկոսը)»[21]: Ստանալով Հակոբ Կաթողիկոսի համաձայնությունը՝ «խանը գյուղը շենացնելուց հետո ամբողջ վեց դանկ մուլքը վերցնում է իրեն եւ ութ տարի Աթոռին ոչինչ չի տալիս»[22]: Ակնհայտ է, որ Ֆռանկանոցի վեց դանկ մուլքը պարբերաբար անցել է պարսիկների ու օսմանցիների ձեռքը՝ ծանր կացության մեջ դնելով գյուղացիներին:

Ֆռանկանոց գյուղն ու Ս. Թովմա եկեղեցին հետագայում հիշատակում է Հովհաննես եպս. Շահխաթունյանցը: Նա Արարատյան դաշտավայրի հայաբնակ գյուղերի կազմում նշում է նաեւ Ֆռանկանոցը, որն ուներ «տունք 17. եկեղեցին յանուն Սրբոյն Թովմայի»[23]:

Վերը հիշատակված իրադարձությունների առնչությամբ՝ Մաղաքիա արք. Օրմանյանը նկատում է, որ «Զարմանալի ըլլալու չափ աճեցաւ Նատիրի եւ Աբրահամի մտերմութիւնը... Կարսի պաշարումը վերցնելէն եւ Երեւանը գրաւելէն ետքը, Նատիր դէպի Տփղիս ուղեւորեցաւ, եւ նորէն Կաթողիկոսը իրեն մօտ ուզեց... այստեղ եղած գործերէն նշանակալի է... աթոռապատկան եօթը գիւղերու սեփականութեան հաստատութիւնը, որոնք են՝ Էջմիածին, Մաստարա, Ֆռանկանոց, Օշական, Քիրաշլու, Տիպաքլու եւ Չէլէպիղըշլա»[24]:

Սիմեոն Երեւանցի Կաթողիկոսի «Ջամբռ» աշխատությունը Մ. Օրմանյանը բնորոշում է իբրեւ լավագույն տեղեկատու՝ Մայր Աթոռի հասույթների, կալվածների, ունեցվածքի ու ապահարկության վերաբերյալ՝ հավելելով, որ այնտեղ ներկայացված են նաեւ Մայր Աթոռի «...մլքատու գիւղօրայք, որոնցմէ Մայրաթոռը առնու զմուլքըս, այսինքն՝ զտասանորդս, եւ կը բացատրուին թէ որպէս ստացաւ զնոսա»[25]: «Սիմէոնի շինարարութիւնները» ենթագլխում, ի թիվս կառուցողական ու բարեւորոգչական աշխատանքների, Մ. Օրմանյանը

19 Անդ, էջ 158:

20 Անդ:

21 Անդ:

22 Անդ, էջ 158-159:

23 Տե՛ս **Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանց,** Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրությամբ՝ Ա. Տեր-Ստեփանյանի, Ս. Էջմիածին, 2014, էջ 293:

24 Տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանյան,** Ազգապատում, հ. Բ., Երեւան, 2001, էջ 3342:

25 Անդ, էջ 3506:

շեշտում է նաեւ Սիմեոն Հայրապետի առանձնակի վերաբերմունքը աթոռապատկան գյուղերի նկատմամբ. «Օշականը ազատեց Մուղանլու կոչուած տաճիկներէն, որ 20 տարիէ ի վեր բռնի հոն նստած էին. Աշտարակն ու Եղուարդը ու Աղաւնատունն ալ ազատեց, որոնք Ջալալբէգեանի (Գրիգոր Ժ. Մակուեցի Ջալալբէկեանց (1443-1465) Կաթողիկոսն է - Ա. Հ.) օրէն տաճիկներու ձեռք անցած էին. Նոյնպէս Մուղնին ու Ֆռանկանոցը Քիլլթէփէի հետ փոխանակեց... Այս յաջողութիւններ կը կատարէր Սիմէոն զօրութեամբ հին կալուածագիրերու, զորս իր պրպտումներուն առթիւ կը գտնէր...»[26]:

Կաթողիկոսական դիվանի «Միաբանից դաֆթար»-ում եւս Ֆռանկանոցը քանիցս հիշատակվում է: Բերենք մի քանի օրինակ. Հայոց ՌՄԼ. (1781) թվականին «Ֆռանկանոցի տէր Սահակին Ա. (1) կիսամաշ փիլոն ետու՝ ձեռամբ գեօղօրէից առաջնորդ Բարսեղ վարդապետին, յունվարի Ե. (5)»[27], կամ ՌՄԾԱ. (1802) թվականին «Ֆռանգանոսայ նորընծային ընդ խնդրանց տանուտէրն իւրեանց տուաք Ա. (1) վանայ շալ փիլոն, յապրիլի 13»[28]: Վկայությունները փաստում են, որ Ֆռանկանոցն ունեցել է հոգեւոր հովիվ, որին Մայր Աթոռից հանդերձանք է տրվել:

Գյուղի հարավարեւելյան կողմում է գտնվում Ս. Թովմա եկեղեցին, որը ներկայումս կիսավեր է (նկ. 1): Այն 16,30 x 11,65 մ արտաքին չափերով եռանավ բազիլիկ է՝ կառուցված գլաքարերով ու սվաղով. շարվածքի հատկապես անկյունային մասերում գործածվել են նաեւ կիսամշակ տուֆ քարեր ու խաչքարերի բեկորներ: Եկեղեցու փայտածածկը ներկայումս չի պահպանվել (հատակին առկա է այունատակ զույգ խարիսխներից մեկը՝ մոտ 0,30 մ տրամագծով, իսկ մյուսը դրված է դրսում՝ հարավային պատի մոտ), պատերի բարձրությունը տեղ-տեղ հասնում է 2,50 - 3,0 մ: Ավագ խորանին կից են ուղղանկյունաձեւ ավանդասենյակները, միակ մուտքը արեւմտյան կողմից է: Եկեղեցու ներսում՝ բեմի դիմաց եւ պատերին, հենած են խաչքարերի բեկորներ ու պատվանդաններ, խաչաքանդակ քարեր, սանդ, շինաքարեր, որոնք կարելի է թվագրել ԺԲ.-ԺԸ. դդ.: ԺԶ.-ԺԷ. դարերին բնորոշ մի ամբողջական խաչքար (1,20 x 0,65 մ) էլ կանգնեցված է բեմի կենտրոնում՝ քիվին եւ քիվատակին եղծված արձանագրությամբ (նկ. 2): Ընթեռնելի է «ԱՋԻՋ» բառը, որը, թերեւս, անձնանուն է կամ դրա մի բաղադրիչն է, իսկ քիվատակին թվականն է, որը դարձյալ մասամբ եղծված է. ընթեռնելի են «Թ ... ԽԳ» թվատառերը, որ, ըստ ամենայնի, պետք է վերծանել այսպես. «Թ⌊ՎԻՆ⌋ ⌈Ռ⌉ ԽԳ. (1594) կամ ⌈Ռ⌉ ԽԳ. (1694)», ինչին լիովին համապատասխան են խաչքարի քանդակային լուծումները:

26 Անդ, էջ 3525-3526:

27 Մ. Մաշտոցի անվ. Մատենադարանի կաթողիկոսական դիվան, թղթ. 2, վավ. 11, էջ 94:

28 Անդ, էջ 210:

Եկեղեցու մասին մեզ հասած տեղեկությունները սուղ են. այն թվագրվում է ինչպես ԺԲ., այնպես էլ ԺԷ.-ԺԸ. դարերով: Թ. Թորամանյանը, նկարագրելով 1924 թ. ապրիլին Ֆռանկանոց կատարած իր այցելությունը, նշում է, որ «Ֆրանկանոցի հարավարեւելյան կողմի վրա կա մի կիսավեր եկեղեցի Սիմեոն Կաթողիկոսի ժամանակ (1763-1780) շինած, այս եկեղեցին շինված է շատ հասարակ քարե պատերով, վաղուց անհետացեր է վրայի փայտածածկը, պատերը նույնպես քանդվելու եւ ավերակ դառնալու վրա են»[29]:

Արմավիրի թեմում ընդգրկված եկեղեցիների կազմում նաեւ Ս. Թովմա առաքյալն է՝ թվագրված ԺԲ. դարով[30], իսկ «Հայկական սովետական հանրագիտարան»-ում նշվում է, որ գյուղից հարավ-արեւմուտք պահպանվել են ԺԷ. դ. եկեղեցու ավերակներ եւ գերեզմանոց՝ ԺԷ.-ԺԹ. դդ. [31]:

Անդրադարձը Ամբերդ գյուղի՝ մինչ օրս պատշաճ ուշադրության չարժանացած Ս. Թովմա եկեղեցուն, պայմանավորված է 2013 թ. աշնանը Արմավիրի մարզի Այգեշատ, Ամբերդ, Փարաքար գյուղերում՝ վիմագրերի հավաքչական աշխատանքների ընթացքում մեր ուշադրությունը գրաված մի արձանագրությամբ[32]: Այն փորագրված է Ս. Թովմա եկեղեցու արեւմտյան մուտքի ճակատակալ ուղղանկյունաձեւ քարին (1,65 x 0,50 մ), արտաքուստ (նկ. 3): Քարը երիզված է գծերով, կենտրոնում խաչ է պատկերված, որի երկու կողմում արձանագրությունն է՝ 3 եւ 2 տողից.



Ի Թ ⸢ՈՒ⸣ ԱԿ ⸢ԱՆ⸣ ԻՍ ՀԱՅՈՑ ՌՄԺԴ. (1765) ԷՐ / ՆՈՐ
ՆՈՐՈԳԵՑԱՒ ՄԲ ԹՕ ⌜Վ⌝ /ՄԱՅԻ ԵՂՑԻ ⌜Ն⌝, Ն ⸢Ո⸣ Ց ⸢ԵՄ⸣ Բ ⌜ԵՐ⌝ Ի
ՄԵԿ ⸢Ի⸣ Ն/ ՀՐԱՄԱՆԱՒ ՍԻՄԷՕՆ / ՍՐԲԱՋԱՆ ՎԷՀԻՆ:

Ուսումնասիրողների ուշադրությունից վրիպած վիմագիրը փաստում է Սիմեոն Ա. Երեւանցի Կաթողիկոսի օրոք՝ Հայոց ՌՄԺԴ. (1765)

29 Տե՛ս **Թ. Թորամանյան,** Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. երկրորդ, կազմեց եւ խմբագրեց Կ. Ղաֆադարյան, Երեւան, 1948, էջ 219:

30 ՀՄմ. www.armaviritem.am:

31 ՀՍՀ, հ. 12, էջ 697:

32 Ամբերդ գյուղում մեզ հետ շրջել ու աշխատանքների ընթացքում իր աջակցությունն է ցուցաբերել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ Հարություն Խուդանյանը. հայտնում ենք մեր շնորհակալությունը:

թվականի նոյեմբերի մեկին, եկեղեցու նորոգման իրողությունը: Այն ոչ միայն հերթական անգամ ցուցանում է Սիմեոն Կաթողիկոսի եկեղեցաշեն գործունեությունը, այլեւ կարեւոր ու արժանահավատ սկզբնաղբյուր է տվյալ եկեղեցու պատմության ուսումնասիրման տեսանկյունից[33]: Հայ եկեղեցու շինարար գահակալներից Սիմեոն Երեւանցու իրականացրած կառուցողական ու նորոգչական մեծածավալ աշխատանքները վկայված են ոչ միայն մատենագրական աղբյուրներում ու տպագիր ուսումնասիրություններում, այլեւ Վաղարշապատի վանքերի բազմաթիվ վիմագրերում: Ակադ. Վ. Հարությունյանը նշում է, որ Սիմեոն Երեւանցին «...իր 17 ամեայ գահակալութեան տարիները նշանաւորեց ոչ միայն եկեղեցական-հոգեւոր, ազգային-հայրենասիրական, պատմագրական եւ տաղերգական, կրթական-մշակութային բեղմնաւոր գործունեութեամբ, այլեւ շինարարական մեծածաւալ իրագործումներով»[34]:

Ըստ վերոնշյալ արձանագրության՝ անվիճելի է, որ եկեղեցին գոյություն է ունեցել դեռեւս ԺԸ. դարից առաջ եւ հայտնվելով անմխիթար վիճակում՝ նորոգվել կամ, գուցե, հիմնովին վերակառուցվել է 1765 թ.: Ակնհայտ է, որ եկեղեցու՝ ուշ միջնադարով թվագրման համար հիմք է ընդունվել հենց խնդրո առարկա վիմագիրը, մինդեռ այն միայն նորոգման փաստն է արձանագրում:

Կարծումենք՝ եկեղեցին կառուցողական, հորինվածքային առանձնահատկություններով առավել հարազատ է ԺԷ. դ. եռանավ բազիլիկների տիպին, որը մեկ դար հետո նորոգման է ենթարկվել: ԺԲ. դարով թվագրելու համար, ըստ ամենայնի, հիմք են հանդիսացել եկեղեցու շարվածքում, ներսում եւ շրջակայքում հիշյալ դարաշրջանին բնորոշ խաչքարերի, քանդակազարդ քարերի բեկորները, որոնք, թերեւս, վկայում են տեղում կամ մոտակայքում առավել վաղ թվագրմամբ կառույցի երբեմնի գոյության մասին:

Եկեղեցին շրջափակված է եղել դարձյալ գլաքարերով կառուցված պարսպով, որի հյուսիսարեւմտյան հատվածը մասնակիորեն կանգուն է. ընդ որում՝ արեւմտյան կողմում՝ եկեղեցու մուտքի դիմաց, պահպանվել է նաեւ պարսպի մուտքը: Եկեղեցուց հյուսիս-արեւելք՝ պարսպի անկյունային մասում, առկա են կիսով չափ պահպանված մի խաչքար եւ մի խաչաքանդակ քար. այս վայրը, ըստ տեղացիների, կոչվում է «Կարմրավոր»:

Եկեղեցու արեւմտյան եւ հյուսիսային կողմերում կարելի է հաշվել ավելի քան 20 տապանաքար՝ հիմնականում օրորոցաձեւ: Քարերը մեծ մասամբ երիզված են նույնատիպ զարդանախշերով, արձանագիր են 3-ը, որոնցից 2-ը՝ եղծված ու անընթեռնելի: Արեւմտյան կողմի օրորոցաձեւ տապանաքարերից մեկի հարավային նիստին հետեւյալ եռատող արձանագրությունն է.

33 Սիմեոն Երեւանցի Կաթողիկոսի մասին առկա գրականության էջերում Ս. Թովմա եկեղեցու կամ հիշյալ Կաթողիկոսի օրոք դրա նորոգման փաստի առնչությամբ վկայություններ մեզ չեն հանդիպել:

34 Տե՛ս **Վ. Յարութիւնեան,** Սուրբ Էջմիածնի շինարար գահակալները, Ս. Էջմիածին, 1996, էջ 64:



⌈ԱՅՍ Է⌉ ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍ/ՏԵԱՆ ՄԿՐՏՈՒՄԻ ՈՐԴԻ ՍԱ/ԵԱՏԻՆ,
ԹՎ⌊ԻՆ⌋ ՌՄՁ. (1831), Թ. (9) Մ⌊ԱՅ⌋ԻՍԻ:
Նկ. 4

Եկեղեցուց հարավ-արեւմուտք՝ ծիրանի այգիների մեջ, ուշմիջնադարյան գերեզմանոցն է՝ հիմնականում հարթ ուղղանկյունաձեւ եւ օրորոցաձեւ տապանաքարերով: Դրանցից մի քանիսն աչքի են ընկնում կենցաղային տարաբնույթ պատկերաքանդակներով, որոնք մեծապես կարեւորվում են հայ ժողովրդի՝ հիշյալ ժամանակաշրջանում ունեցած կենցաղավարման դրսեւորումներով: Օրինակ՝ օրորոցաձեւ տապանաքարերից մեկի հյուսիսային նիստին պատկերված է խրախճանքի ու վայելքի տեսարան. մարդու պատկերաքանդակին կից են գինու կուժն ու թասը (նկ. 5): Թ. Թորամանյանը նշում է, որ գերեզմանոցը «...շատ հին չէ, սակայն հետաքրքրական են այնտեղ գոյություն ունեցող մի շարք գերեզմանաքարեր, որոնք թե՛ կուլտուրական, եւ թե՛ ազգագրական նշանակություն ունին այս կողմերի 16-17-րդ դարի ժողովրդի կյանքի վերաբերմամբ: Դրանք համեմատաբար բարակ, սովորականից մի քիչ բարձր եւ կիսաբոլոր վերջավորությամբ կանգնված միակտուր քարեր են, փոքր-ինչ հիշեցնում են հին օրորոցաձեւ տապանաքարերը»[35]:

Ցավոք, տապանաքարերից շատերը տեղահանված են ու շրջված: Դրանցից արձանագիր են չորսը, որոնցից մեկը շրջված է, գիրը՝ եղծված, միայն ընթեռնելի է թվականը, որ է՝ «Ի 1834, մայիս 22» (ընթերցվում է նաեւ «Մկրտում» անձնանունը, որը, թերեւս, վերոնշյալ տապանագրում հիշատակված Մկրտումն է): Մնացած տապանագրերը վկայակոչում ենք ստորեւ՝ ըստ ժամանակագրության.

Տապանաքար ուղղանկյուն օրորոցաձեւ, գիրը՝ հարավային նիստին, 2 տող.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱԻԱՔԻՆ, ԹՎ/ԻՆ ՌՃԽԳ. (1694):
Նկ. 6

35 Տե՛ս **Թ. Թորամանյան,** Նյութեր..., հ. երկրորդ, էջ 219:

Տապանաքար օրորոցաձեւ, գիրը՝ հարավային նիստին, 3 տող.



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՈՒՀԱՆԻՆ, ՈՐ Է ՈՐԴԻ / ՄԱՐՏԻՐՈՍԻՆ,
ՈՐ ՀԱՆԳԵԱՒ / Ի ՔՍ ԹՈՒԻՆ ՌՄԼԹ. (1790):
Նկ. 7

Տապանաքար օրորոցաձեւ, գիրը՝ արեւմտյան նիստին, 4 տող.



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ⌈ԴԱՐԲԻՆ⌉ ՎԱՐՊԵՏ / ՍԱՐԳՍԻՆ,
ՈՐ Է ՈՐԴԻ ԴԱՐԲԻՆ ՎԱՐԴԱ/ՆԻՆ, ՈՐ ՀԱՆԳԵԱՒ
Ի ՔՍԹՈՒԻՆ ՀԱՅ/ՈՑ Ի ՌՄԽՋ. (1797):
Նկ. 8

Ուշագրավ է հատկապես վերջին տապանագիրը, ուր նշվում է նաեւ ննջեցյալի արհեստը՝ դարբին վարպետ: Ըստ տապանագրի՝ դարբին Սարգիսն իր մասնագիտությունը ժառանգել է հորից՝ դարբին Վարդանից, ինչը վկայում է, որ գյուղում որոշակիորեն զարգացած է եղել դարբնությունը: Վերոնշյալ տապանագրերում հիշատակված անձինք, ըստ ամենայնի, գյուղի նշանավոր դեմքերից են, ովքեր իրենց գործուն մասնակցությունն են ունեցել ժամանակի հոգեւոր ու մշակութային կյանքում:

Գյուղի հյուսիսային մասում՝ էնեոլիթյան բնակատեղիին ու դամբանադաշտին կից, մեծ գերեզմանոցն է, որտեղ թաղումներ են կատարվում նաեւ այսօր (նկ. 9): Վաղագույն տապանաքարերը թվագրվում են ԺԹ. դարավերջով եւ Ի. դարասկզբով. ըստ տեսակի՝ դրանք հիմնականում օրորոցաձեւ, խորանարդաձեւ եւ հարթ ուղղանկյունաձեւ են: Վիմագրերի հավաքման ժամանակագրական սկզբունքը նկատի առնելով (մինչեւ ԺԸ. դարավերջ, իսկ ԺԹ. դարից առանձնակի կարեւորություն ունեցողները)՝ տվյալ տապանագրերը քննության չենք ենթարկում:

Ամբերդ գյուղի հուշարձաններից նշելի է նաեւ Ս. Պողոս-Պետրոս բազիլիկ եկեղեցին (նկ. 10), որի ավերակներն այսօր էլ պահպանվում են

գյուղի կենտրոնական մասում՝ խաղահրապարակի հարեւանությամբ: Բարերար Նշան Ստեփանյանի եւ «Ֆռանկանոց» հիմնադրամի միջոցներով վերջերս բարեկարգվել են ոչ միայն Ս. Թովմա առաքյալի եկեղեցին, այլեւ հիշյալ բազիլիկն ու դրանց շրջակայքը: Բարեբախտաբար, պահպանվել է նաեւ եկեղեցու բարավորի քարը՝ կառուցմանը վերաբերող հնգատող արձանագրությամբ.



ԱՅՍ Է ՍՈՒՐԲ ՊՕՂՈՍ ԵՒ ՊԵՏՐՈՍ / ԱՆՎԱՆԻ ԵԿԵՂԵՑԻ,
ՈՐ ԷՐ ՊԱՏՃԱՌ / ՅՕՀԱՆՆԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ԸՆԴ /
ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԳԵՂՋ ՖՌԱՆԿԱՆ ⌊Ո⌋Ց / 1868 ԹՎԻՆ, 1
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ:

Նկ. 11

Համաձայն վիմագրի՝ Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին կառուցվել է 1868 թ., այսինքն՝ Գեւորգ Դ. Կոստանդնուպոլսեցի (1866-1882) Կաթողիկոսի օրոք, Հովհաննես արքեպիսկոպոսի նախաձեռնությամբ եւ, ըստ ամենայնի, գյուղացիների միջոցների ներդրմամբ («ընդ հասարակութեան գեղջ Ֆռանկանոց»): Ուշագրավ է վիմագրում գյուղի՝ «Ֆռանկանոց» անունով հիշատակումը:

Վերոշարադրյալը թույլ է տալիս արձանագրել, որ ՀՀ Արմավիրի մարզի Ամբերդ (Ֆռանկանոց) գյուղի պատմությունը, բացի հնագիտական պեղումների արդյունքներից ու մատենագրության մեջ պահպանված վկայություններից, որոշակիորեն լուսաբանվում է նաեւ քննության առնված վիմագրերի միջոցով, ըստ որոնց, գյուղի եկեղեցին նորոգման է ենթարկվել 1765 թ., դրանց ժամանակակից են նաեւ ներկայացվող տապանագրերը:

Մայր Աթոռին հարկատու Ֆռանկանոց, ներկայիս՝ Ամբերդ գյուղը որոշակի դեր ու նշանակություն է ունեցել ԺԷ. եւ հետագա դարերում. այստեղ են գործել Ս. Թովմա առաքյալի եւ ավելի ուշ՝ 1868 թ. կառուցված Ս. Պողոս-Պետրոս բազիլիկ եկեղեցիները:

РЕЗЮМЕ

Село Амберд (Франканоц, Франганоц) находится в Армавирской области Республики Армения, на расстоянии около 8 км к северо-западу от города Вагаршапат. Село имеет важное историко-археологическое значение. В 30-е годы прошлого века здесь были найдены энеолитическое поселение и некрополь. В селе находятся базиликальные церкви Св. Товмы (17-й в.) и Св. Погоса-Петроса (1868 г.). Согласно надписи на тимпане входа церкви Св. Товмы, церковь была отремонтирована во время правления католикоса Симеона Ереванци (1763-1780), в 1765 г. Вокруг церкви и в селе также сохранились кладбища позднего средневековья. Самые древние эпитафии датируются 17-18-ми веками.

SUMMARY

The village of Amberd (Frankanots, Franganots) is situated in Armavir region of Republic of Armenia, around 8 km to the north-west from Vagharshapat. The village has historical-archeological significance: the Aeneolithic settlement and burial site were discovered during the 30's of the last century in this area. The basilic churches of St. Tovma (17th century) and St. Poghos-Petros (St. Paul-St. Peter) (1868) are also situated in the village. According to the inscription on the entrance tympanum of St. Tovma church, the church was reconstructed during the reign of the Catholicos Simeon Yerevantsi (1763-1780) in 1765. There are also Late Medieval cemeteries around the church and in the village. The earliest epitaphs are dated to the 17-18th centuries.